Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«12» դեկտեմբերի 2022 թ. թիվ 175 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
_____ Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաշվետվություն
Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2022թ.-ի

2022թ. հաշվետու տարում ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ) Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքներն ու միջոցառումները.

Ըստ Բաժնի 2022թ.-ի աշխատանքային պլանի կազմակերպվել և իրականացվել է դասախոսական կազմի վերապատրաստում «ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հեռավար հարթակից օգտվելու կարողությունների ու հմտությունների ձևավորում, հեռավար հարթակում դասընթացների պատրաստում և վարում» թեմայով: Կենտրոնի կայքէջում տեղադրվել է համապատասխան տեղեկատվություն[1]: Դասախոսներին տրամադրվել են համապատասխան հավաստագրեր: Մինչ վերապատրաստման անցկացումը, կազմակերպվել է նաև վեբինար հանդիպում **երկրաբանության** և **մոլեկուլային և բջջային կենսաբանության** ամբիոնների դասախոսների հետ:

Հաշվետու տարում ձեռք են բերվել և փոխարինվել 6 հոսանքի անխափան սնուցման սարքի (UPS) մարտկոց, որոնցից մեկ UPS-սարքը ապահովում է սերվերային համակարգի մի մասի և կապի միջոցների էլ. հոսանքի անխափան սնուցումը: Մնացած 5 հատը շահագործման է հանձնվել աշխատակազմին ըստ տեխնիկական միջոցի և աշխատանքային առաջնահերթության:

Windows 10 օպերացիոն համակարգով աշխատող աշխատանքային համակարգիչների արագագործության բարձրացման նպատակով ձեռք է բերվել 7 SSD կրիչ/կուտակիչ, որոնցից 4 հատը ավելացվել են աշխատակիցների

[1] https://www.isec.am/articles/news/moodle-training.html

համակարգիչներին, իսկ 3 հատը փոխարինվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դահլիճների դյուրակիր համակարգիչներում՝ ներկայացուցչական, տեղում կամ տեսահանդիպումներում անցկացվող միջոցառումների ժամանակ կայուն ցուցադրություններ ապահովելու համար:

Բացի վերոգրյալ տեխնիկական միջոցներից ու համալրող սարքերից ձեռք է բերվել նաև 1 համակարգիչ և 1 բազմաֆունկցիոնալ տպիչ հաշվապահության համար, որոնք համապատասխան կարգաբերումներից հետո հանձնվել են շահագործման:

Հարկ է նշել, որ տարվա ընթացքում եղել են չնախատեսված գնումներ և աշխատանքներ: Տեսահսկման համակարգի անխափան աշխատանքի և միասնական միջավայրում մեկտեղված տեսանյութերի հավաքագրման և ըստ անհրաժեշտության մշակման համար գնվել և շահագործման է դրվել համապատասխան տեխնիկական 1 միջոց: Շարունակվել է ավտոմատ անցագրային համակարգի աշխատանքի ապահովումը և շտկվել են ընթացիկ առաջացած խնդիրները: 2022-2023թթ. ուսումնական տարվան ընդառաջ, հոսանքալարերի խափանման պատճառով հարկերից մեկում վնասվել էին կապուղիները և ընդհատվել էր տվյալ հարկի կապը, ինչով պայմանավորված ցանցային որոշ միջոցների հրատապ գնման անհրաժեշտություն էր առաջացել:

Վերստեղծվել է համակարգչային լսարան 17 համակարգչով: Այն հագեցված է պրոյեկտորով, բարձրախոսով, ինտերակտիվ էկրանով: 1 լսարանում փոխարինվել է պրոյեկտորը ավելի նոր պրոյեկտորով:

Մեկ աշխատասենյակ ձևափոխվել է խորհրդակցությունների դահլիճի՝ կահավորվելով համապատասխան տեխնիկական միջոցներով:

Բաժնի կողմից կարգաբերվել և նոր ձևավորված խորհրդակցությունների դահլիճում կիրառության են դրվել հաշվետու տարում ձեռք բերված առցանց աշխատաժողովների և ցուցադրությունների համար նախատեսված **հեռուստացույցը** և **ձայնային նոր համակարգը**: ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կողմից ստացվել. Բաժնին կարգավորման և շահագործման են տրամադրվել **մեդիալաբորատորիայի** համար նախատեսված մեդիա միջոցներ՝ բարձրակարգ տեսախցիկ, անլար խոսափողներ և այլ տաղավարային միջոցներ:

Թարմացվել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում տեղադրված հեռավար ուսուցման հարթակի /սերվեր/ (կայք՝ https://vle.sci.am/) հիմքում ընկած Moodle միջավայրը ավելի նոր տարբերակով: Թարմացվել և վերակարգավորվել են համակարգի այլ ծրագրային ապահովումները ևս: Հարթակի անվտանգության և անխափան աշխատանքի համար կատարվել են անհրաժեշտ ընթացիկ սպասարկումներ՝ արխիվացվել են տվյալների բազաները, սերվերային համակարգը, կատարվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլն:

Բաժնի աշխատակցի կողմից համակարգվել է հեռավար կրթության **«Գործարար վարչարարություն (կառավարում՝ MBA)»** մասնագիտությունը:

Անկախ հեռավար հարթակում դասընթացի մշտական անցկացումից, հաշվետու տարվա կիսամյակներում՝ բոլոր կրթաձևերի մասնագիտությունների համար բացվել են համապատասխան առարկայական տիրույթներ, ըստ սահմանված պահանջների՝ առարկայի ուսուցման համար, հարթակում անհրաժեշտ նյութերի տեղադրումն ապահովելու համար:

Բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել են խորհրդատվություն և աջակցություն ինչպես ուսանողներին, դասախոսներին, այնպես էլ վարչական անձնակազմին՝ պաշտոնական էլեկտրոնային փոստից և հեռավար հարթակից օգտվելուց առաջացած հարցերում:

Դասախոսների համար ստեղծվել են տեսաուղեցույցներ հեռավար հարթակում՝ պահանջներին համապատասխան նյութերի տեղադրման մանրամասն նկարագրությամբ:

Իրականացվել է հեռաուսուցման երկրորդ սերվերի ընթացիկ սպասարկում (**https://online.isec.am/**):

Բաժնի կողմից վերահսկվող էլեկտրոնային կառավարման և ներքին փաստաթղթաշրջանառության համակարգի թարմացման աշխատանքները պլանավորվածից դանդաղ են իրականանում օբյեկտիվ պատճառներից ելնելով:

Իրականացվել է պաշտոնական կայքի (**https://www.isec.am**) սպասարկում, կայքի բովանդակային պարբերական թարմացումներ և ավելացումներ, այդ թվում տարաբնույթ միջոցառումների, ընդունելության և առանձին մասնագիտությունների համար պաստառների պատրաստում, մշակում: Ստեղծվել են նոր էջեր:

ԳԿՄԿ կայքեր

	2020	2021	2022
Կենտրոնի պաշտոնական կայքի այցելությունների քանակը	50959	58523	56941
Կենտրոնի պաշտոնական կայքում տեղադրված տարեկան նորությունների և հայտարարությունների թիվը (հայերեն, ռուսերեն, անգլերեն)	77	137	145
Կենտրոնի դոմեյնում գործող կայքերի քանակը	5	5	5
ՀՀ ԳԱԱ դոմենում գործող կայքերի թիվը	2	2	3

Թարմացվել է հեռակոնֆերանսների կազմակերպման համար նախատեսված սերվերը, նորացվել են անվտանգության և ծրագրային անհրաժեշտ փաթեթները:

Ըստ անհրաժեշտության կազմակերպվել են տեսակամուրջներ գործընկեր կազմակերպությունների հետ: Բաժինն ապահովել է աշխատակիցների աշխատանքային առցանց և այլ հանդիպումների մասնակցությունը:

Բաժինն իր գործուն մասնակցությունն է ունեցել **«Հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ. արդիական խնդիրներ և ձեռքբերումներ»** միջազգային գիտաժողովի կազմակերպման աշխատանքներին:

Թարմացվել է պահոցային համակարգի ծրագրային ապահովումը (ASUSTOR):

Կատարվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ աշխատանքային համակարգիչների պրոֆիլակտիկ ստուգումներ, առաջացած ծրագրային խնդիրների վերացում, ցանցային և համալրող սարքավորումների (տպիչներ, սկաներներ և այլն) վերանորոգում ու կարգաբերում և այլ խնդիրների լուծման ուղղությամբ տարվել աշխատանքներ: Բացվել և տրամադրվել են աշխատանքային, ուսանողական

էլեկտրոնային փոստի հաշիվներ: Աշխատակիցներին ցուցաբերվել է տեխնիկական և մասնագիտական աջակցություն:

Իրականացվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ լսարանային համակարգիչների ծրագրային փաթեթների, ինչպես նաև հակավիրուսային ծրագրերի թարմացումներ և ստուգումներ:

Համակարգիչներ

	2020	2021	2022
Ներքին ցանցին միացված համակարգիչներ	104	113	130
Համացանցին միացված համակարգիչներ	104	113	142
Այդ թվում դյուրակիր համակարգիչ	44	50	47
Արտաքին ամբիոններում տեղակայված	12	12	15
Ընդհանուր համակարգիչների թիվը	158	179	155
Կենտրոնի աշխատակիցների պաշտոնական էլեկտրոնային հասցեների թիվը	158	158	157

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ սերվերների անվտանգ, հուսալի և անխափան աշխատանքի համար կատարվել են համապատասխան ծրագրային փաթեթների տեղադրում և նորացում, սերվերների պարբերաբար ռեզերվային արխիվների ստեղծում:

Սերվերային համակարգերի

	2020	2021	2022
Կենտրոնի SS համակարգերի աշխատանքներն ապահովող սերվերների քանակը	7	7	7
Սերվերային համակարգի արխիվային պահոցներ (TB)	12	12	12

Կատարվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ լոկալ ցանցի արդիականացման, ընդլայնման և սպասարկման աշխատանքներ՝

- անցկացվել են ցանցային նոր կապուղիներ
- թարմացվել են ցանցային մոնիտորինգի ծրագրային փաթեթները:

Անլար կապ

	2020	2021	2022
«Wi-Fi» հանգույցներ	12	12	12
EDUROAM գիտական ցանց	3	3	1
Ընդամենը	15	15	13

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ որակի ապահովման բաժնին ցուցաբերվել է աջակցություն ուսանողների շրջանում հարցման անցկացման ուղղությամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների
բաժնի պետ **Ա. Եղոյան**